

2016թ. համամասնական ընտրությունների մասին:

Տեղական ինքնակառավարման մարմինների Գյումրի և Վանաձոր քաղաքների ընտրությունների համեմատականը մինչ այժմ եղած ընտրությունների հետ:

2016 թ. հոկտեմբերի 2-ին ընտրություններին մասնակցել են Գյումրիում մոտ 36.3%, Վանաձորում մոտ 42.7%:

Քվեարկության ընթացքում մասնակցության վերաբերյալ, ըստ պաշտոնապես հրապարակված, տվյալների, որևէ տեղամասում մեկ ընտրողի գրանցման համար ծախսված միջին ժամանակը պակաս չի եղել մեկ րոպեից, այսինքն տեղամասերի ֆիզիկապես հնարավոր թողունակությունները գերազանցող քվեարկության մասնակցություններ չեն եղել:

Ամենափոքր ժամանակը, ըստ հրապարակված տվյալների, եղել է Գյումրի 34/49 տեղամասում, որտեղ ժամը 17-ից մինչև 20-ը մեկ ցուցակում մեկ ընտրողի գրանցման միջին ժամանակը կազմել է մոտ 58 վայրկյան: Իսկ մնացած բոլոր տեղամասերում մեկ ցուցակում մեկ ընտրողի գրանցման միջին ժամանակը նույնիսկ ավելին է եղել քան 100վայրկյանը, բացառությամբ Վանաձոր 30/37 տեղամասի - 96վայրկյան, Գյումրի 34/14 - 84վայրկյան, 34/64 - 76վայրկյան, 34/77 - 94վայրկյան:

Համեմատության համար նշենք, որ մինչ 2016թ եղած բոլոր քվեարկություններում, բազմաթիվ տեղամասերում, արձանագրվել են տեղամասերի ֆիզիկապես թողունակությունները գերազանցող քվեարկության մասնակցություններ, մեկ ցուցակում մեկ ընտրողի գրանցման համար տեսականորեն ու գործնականում հնարավոր ամենաքիչ ծախսվող միջին 44 վայրկյանից պակաս, նույնիսկ ֆանտաստիկ 10 վայրկյայան, ժամանակներ ծախսած տեղամասեր:

Ըստ նախնական արդյունքների՝

Գյումրիի 82-ից 22 տեղամասերում (34/1, 34/10, 34/16, 34/20, 34/21, 34/28, 34/34,34/36, 34/40, 34/42, 34/44, 34/46, 34/48, 34/50,34/51, 34/54, 34/58, 34/65,34/73, 34/75, 34/79, 34/81) առկա են ընտրական թվերի անհամապատասխանություններ, տեղամասերին հատկացվաց, մարված քվեաթերթիկների, ընրությանը մասնակցած ընրողների թվերի, ստորգրությունների, քվեների, քվեատուփերում առկա ծրարների,

քվեատուփերում եղած քվեաթերթիկների թվերի, գումարային առումով իրարից 239 - ով թվային տարբերություններ, ինչը կասկածի տեղիք է տալիս նշված տեղամասերում արդար ու մաքուր քվեարկությունների հարցում: Այդ թվում 34/27 և 37/52 տեղամասերում, քվեատուփում քվեարկության ծրարները 1-ով ավելին են քան քվեարկության մասնակիցների թիվը: Լցոնում: 34/21, 34/36, 34/54, 34/79 տեղամասերում քվեատուփում առկա քվեաթերթիկներն ավել են քան ծրարները: Բաց քվեարկություն, Լցոնում: Որոշ տեղամասերում մասնակիցների թվերն ավելին են քան քվեատուփերում առկա ծրարներն ու քվեաթերթիկները և այլն: Անճշտություններ են արձանագրված 12 տեղամասերում գումարային 106 անճշտություն: Անվավեր քվեաթերթիկները կազմում են ընտրությանը մասնակցած ընտրողների 5,4%-ը:

Վանաձորի 58 տեղամասերից 27-ում (30/1, 30/4, 30/5, 30/7, 30/8, 30/9, 30/10, 30/13, 30/14, 30/15, 30/16, 30/17, 30/20, 30/23, 30/27, 30/29, 30/30, 30/31, 30/32, 30/39, 30/42, 30/46, 30/47, 30/50, 30/54, 30/56, 30/58) առկա են ընտրական թվերի գումարային առումով իրարից 59-ով տարբերվող թվային, անհամապատասխանություններ, 30/42 տեղամասում 14-ով, 30/14-ում 6-ով, 30/31-ում 3-ով, 30/31-ում 4-ով, մյուսներում իրարից 1-ով, կամ 2-ով թվային տարբերություններ: 30/8, 30/46, 30/47 տեղամասերում քվեատուփում առկա քվեաթերթիկներն ավել են քան ծրարները: Անճշտություններ են արձանագրված 7 տեղամասերում գումարային 9 անճշտություն: Անվավեր քվեաթերթիկները կազմում են ընտրությանը մասնակցած ընտրողների 3,9%-ը:

Նկատի ունենալով ընտրական թվերի անհամապատասխանությունները բազմաթիվ տեղամասերում, քվեարկության կարգի խախտման և տեղամասերից դուրս տեղի ունեցաց գործառույթների ու իրադարձությունների վերաբերյալ հաղորդումները, դժվար է ասել թե ընտրություններն արդար էին ազատ ու մաքուր: Բայց որ այս անգամ տեղամասերում չեն եղել բացարձակ ու բացահայտ կեղծիքներով քվեարկության գործառույթներ, ինչպես եղել է առաջ, ակնհայտ է: Հետաքրքիր է, որ նշված քաղաքներում, ըստ նախնական արդյունքերի, այս պայմաններում իշխող կուսակցությունը միայնակ իշխելու համար անհրաժեշտ մեծամասնության քվեները չկարողացավ ապահովել: Իսկ թե ինչպիսին կլինեն վերջնական արդյունքները հարց է: